

ԵՎԿԼԻԴԵՍԻ ԵՐԿՐԱԶԱՓՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՐԵՆ ՆՈՐ ԲՆԱԳԻՐԸ

Պրոֆ. Գ. Բ. ՊԵՏՐՔՍՅԱՆ, պրոֆ. Ա. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

1. ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մաթեմատիկայի, մասնավորապես երկրաչափության մեջ, անցյալում ամենից մեծարժեք ու անզուգական գործ է համարվել Աղեքսանդրյան դպրոցի հանճարեղ մաթեմատիկոս Եվկլիդեսի՝ «γεωμετρία» («

տիկոս Ս. Պրոնյանը 1794 թ. իր «Երկրաչափության» առաջարանում⁴ Խոսելով Եվկլիդեսի անձնավորության և նրա երկրաչափական հանրահայտ աշխատության թարգմանության մասին նշել է, որ այն թարգմանված է նաև հայերեն և նրա թարգմանիչն է Գ. Մազիստրոսը. «...Գործք մեծի հեղինակի Եվկլիդեսյ,—գրում է նա,— և ևս գրեթե յամենայն լեզուս թարգմանեալ է, ոչ միայն Եւրոպացւոց, այլ ևս և արեւելեաց, որպէս և ի մեր Հայկազեան լեզուս թարգմ

վածի հիման վրա⁸։ Սուբբյանի նույն պակասավոր հատվածը հրատարակել է հայագետ Leroy-ը 1936 թ.⁹։ Երրորդ անգամ հրատարակել է բանասեր Ակինյանը 1937 թ. «Հանդես ամսօրյայում»՝ Տյուբինգենի և Պալիայի համալսարանների նշված ձեռագրերի բնագրերի համեմատությամբ¹⁰։ Չորրորդ անգամ հրատարակել է Ֆիլիկա-մաթ. գիտ. դոկտոր Գ. Բ. Պետրոսյանը՝ պատասխանի բնագիրը համեմատության մեջ դնելով հունականի հետ¹¹։

քով, այն ավելի հին չէր կարող լինել XVI դ. վերջերից կամ XVII դ. սկզբներին: Դրան մենք ղեռ կանդրադառնանք, երբ կխոսենք Եվկլիդեսի երկրաչափության հայ թարգմանչի անձնավորության մասին:

3. ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայերեն նորահայտ երկրաչափությունը վերնագրված է. «Երկրաչափության Եվկլիդես»: Եվկլի

